

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՒ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱԴՏՈՑ*

ԳԼՈՒԽ ԶՈՐԾՈՐԴ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

§ 1

Այսպես ուղիմն, Դանիելյան գրերը Հայաստան բերվեցին և ընթանուր գործածություն ստացան Հայոց մեջ Աշխատության երրորդ մասին վերապահելով խոսել Դանիելյան այրութենի կազմության մասին ընդարձակորեն, այստեղ նկատենք միայն, որ այդ այրութենը տմենալով ինչ-ինչ թերություններ, չէր կարող լիովին լրացնել Հայոց լեզվի պահանջները. բայց նաև չէր այնպես պահասավոր, որ մի անգամից փրկման պետք դեն պցվեր: Այս պատճառով երկու տարի տևեց այդ այրութենի գործածությունը (Սամվել Անեցին, Հակառակ մյուս պատմափիրների ասածին, դնում է մեկ տարի). և վերջապես Մեսրոպ նկատեց, թե աշակերտների համար այնշափ հեշտ չէր վարժվել այդ դրերին. ուղղագործյան և ընթերցանության սիսաններ անջուշտ տեղի էին ունենալու միջա, այնպես որ Մեսրոպ վերջապես ստիպվեց խափանել նրանց գործածությունը:

Կարող են տմանք տարօրինակ գտնել այս դեպքը: — Եթե Դանիելյան գրերը այնպես անհատար էին, միթե չ'ը կարող Մեսրոպ մի անգամից նկատել արդ. ի՞նչ պետք կար երկու տարի փորձեցու և երկու տարի հետո միայն նկատելու, թե անկատար են Այս մտածմունքը անշուշտ ստվեր պիտի ճպեր Մեսրոպի վրա: — Բայց նիշտ հակառակն է,

Դանիելյան գրերը կարող ենք որոշ շափով համեմատել ասորերեն, արաբերեն, եբրայեցերեն և այլ այսպիսի այրութեների հետ, որոնք թեև շատ պակասավոր, բայց ահա այսքան դարերեւ ի վեր գործածվում են և ո՞վ գիտի դեռ որքա՞ն ժամանակ պիտի գործածվեն, եթե այս պակասավոր այրութեները կարողացան այսքան դարեր դիմանալ, նույնը կարող էր լինել նաև Դանիելյան այրութենը: Մեսրոպ աշքի առաջ տմեր հատկապես ասորական այրութենը, որին ո՛չ միայն ասորիները, այլև հայերից շատեր վարժված էին: Եվ, վերջապես, Մեսրոպի առաջն փորձը հաշողությամբ պահպած էր. առաջին աշակերտները կարողացել էին սովորել այդ տառերը. «Ենթէին հայցին մա յարքայէ մանկուն մատաղս, որով զնշանագիրսն մարթեացեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային...» (Կորուն, էջ 9). ուստի Մեսրոպ մտածում էր, որ դժվարությունը անհաղթահարելի չէր:

Երկու տարվա փորձը ո՛չ թե ստվեր է ձգում Մեսրոպի վրա, այլ մեծ պատիվ է իրեն: Պարսիկները, թյուրքերը և այլն հազարամյա գործածությունից հետո, նորերս միայն զգացին իրենց այրութենի պահասավորությունը և դարմաներու կարիքը: Իսկ եթե Մեսրոպ երկու տարուց կարողացավ զգալ, սրանից ավելի ի՞նչ մեծ պատիվ իրեն: Չեմ ուզում շեշտել այն հանգամանքը, որ հիշյալ ազգերը թեև զգացին իրենց այրութենի պակասավորությունը, բայց դարմանելուց շատ հեռու են: Թյուրքերը ոչ շատ տարիներ առաջ

* Տարունակված ամսագրի 1954 թվականի № XI-ից, XII-ից և 1955 թվականի № I-ից:

միայն ցնչեցին իրենց այլուրենք և ընդունեցին հկոռովականը. իսկ պարախկները, արաբները, աֆղանները և այլն դեռ մնան մին իրենց պակասավոր այլուրենին կապված: Մինչդեռ Մեսրոպ զգաց և մեկ տարվա մեջ դարձանեց ամենագեղեցիկ կերպով: Ասում ենք՝ շենք հիշում այս հանգամանքը, որովհետև առաջինների համար այժմ շատ ուշ է, գրականությունը այնպիս է տարածված, որ մեծամեծ ճիգերի պետք կա այնպիսի հին ու համատարած մի ժամանություն խափանելու, պակասավոր այլուրենը վերացներու համար: Մինչդեռ Դանիելյան գրերի գործածությունը դեռ չափազանց թարմ լիներով, շատ նեշտ էր խափանել ու վերացնել:

Տ 2

Դանիելյան նշանագրերի խափանումով, Մեսրոպ դարձալ ընկավ իր նախկին հոգսերի և մտածմոնքների մեջ: Երկու երանելի անձերը բավական ժամանակ աշխատեցան այս կացության դարման տանելու համար. «Ճետ այնորիկ դարձեալ կրկին անդամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս իննորիկին ժամանակս ինչ» (Կորյուն, էջ 9): Վերջապես Մեսրոպ տեսնելով, որ Հայաստանում մնարով չպիտի կարողանա պատշաճորեն օգտվել, որովհեց անձամբ դիմել Միջագետք, խուզարկովուներ կատարելու և իր ցանկությունը ի կատար ածելու համար: Ուստի Վուաշշապուհ թագավորի հրամանով և Սահակ կաթողիկոսի համաձայնությամբ, Մեսրոպ իր հետ առավ մի իրուրի աշակերտներ և հրաժշտ տալով նրանց, ճանապարհ ընկավ դեպի հարավ, ասորական քաղաքները:

Դժբախտաբար Մեսրոպի ճանապարհորդության հանգամանքները և ուղեգիծը մանրամասն շեն ավանդում պատմագիրները: Այս մասին նորենացին է, որ ավելի կատարյալ տեղեկություններ է տալիս, բայց զրանք էլ համաձայն շեն Կորյունին, որ բար մեղ ամենից վավերական աղբյուրն է: Մտիպաված ենք ուրեմն Կորյունի տված տեղեկություններով հյուսել մեր պատմությունը, քայլ առ քայլ քննելով նրա ընծայած անորոշությունները և կատաձեկի կերտերը երևան հանելով:

Կորյուն անորոշ կերպով պատմում է, թե Մեսրոպ Հայաստանից դուրս գալով, այցելեց ասորական քաղաքները Եղեսիա և Ամիգ. «Երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երիտա Սարաց. որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիգ անուն» (Կորյուն, էջ 9): Այս խոսքերից այնպիս է երևում, որ Մեսրոպ այցելել է նախ Եղեսիա և ապա Ամիգ, ինչպիս այնուում է նաև Տաղակարյան (էջ 26): Բայց մի պարզ ակնարկ քարտեզի վրա՝ բափական է համոզե-

լու համար մեզ, թե չէր կարող Մեսրոպ նախ Եղեսիա և ապա Ամիգ մտած լինելու Ամիգ, որ եթե այժմյան Տիգրանակերտը (Դիարուքիրը) չէր, նրանից էլ շատ հեռու չէր, գտնվում է լայնության 38° և երկարության 40° աստիճանների տակ, Մուշի հարավ-արևմտյան կողմը. իսկ Եղեսիա, որ այժմյան Ուրփան է, գտնվում է լայնության 37° և երկարության 39° աստիճանների տակ, Տիգրանակերտի հարավ-արևմտյան կողմը: Այսպիս որ, եթե մի ուղիղ պիծ քաշենք Մուշից Եղեսիա, այդ ուղիղ ոժի մեջտեղի կետը կը նի Տիգրանակերտը: Հայաստանից մեկնող ճամփորդը նախ պետք է մտնի Տիգրանակերտ և այնուհետև միայն Եղեսիա: Այսպիս արած պիտի լինի նաև Մեսրոպ, և երբ Կորյուն առաջինը Եղեսիա և երկրորդը Ամիգն է նշանակաւ, այդ կարգը ոչ թե ճամփանակագրական պետք է համարել, այլ ըստ արժանիքի: Եղեսիան իր համալիսարանով կարող էր պարծիլ ու պանծալ ամբողջ Միջագետքում, իբրև ամենից առաջնակարգ քաղաքը, մինչդեռ Ամիգը վաղուց ընկած լինելով, չոնքեր բնակվ մի քան, նրա հետ համեմատվելու համար:

Հաստատ է ուղեմն, որ Մեսրոպ Վաղարշապատից մեկներով և Հավանաբար իր հայրենի Տարոն գալաքուց անցնեղով, իշավ նախ Ամիգ և այստեղից էլ Եղեսիա:

Մեսրոպ թե՛ Ամիգի և թե՛ Եղեսիայի մեջ պատշաճակող ընդունելություն գտավ. եպիսկոպոսները, կղերականները և իշխանները դիմավորեցին նրան և թե՛ իրեն և թե՛ իր աշակերտներին մեծարանքներ ցույց տալով, սիրալիր կերպով ընդունեցին ու պահցին: Կորյուն այս ընդունելությունը համառոտ կերպով պատմելուց հետո, հիշում է նաև այն երկու եպիսկոպոսների անունը, որոնք Մեսրոպին քննութեցին՝ Բաբիլաս և Ալեքսանդր Ամիգի: Եպիսկոպոսն էր, թե՛ երկուսն էլ նույն Եղեսիա բաղաքի եպիսկոպոսներ էին. «Եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց, որոց առաջինն Եղեսիա կողմանուն էրի. «Եւ երթեալ հասանէր կերտերից կոչի, և երկրորդն Ամիգ անուն: Ընդունելու պուրան եպիսկոպոսացն, որոց առաջինն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս, հանդերձ կղերականուն բաղադրի ապատական պատմության կողմից» (Կորյուն, էջ 9):

Տաղավարյան (էջ 26) ընդունում է առաջին կարծիքը, այսինքն թե Բաբիլաս Եղեսիայի, իսկ Ակակիոս՝ Ամիգի եպիսկոպոսն էր. Այսպիս են նաև Մարկվարտ («Պատմու-

թիւն հայ նշանագրերուա, էջ 58), Գալուստ Տեր-Մկրտչյան («Արարատ», 1912 թ., էջ 508), Նահապետյան (Թթազմավէպ», 1913 թ., էջ 136), Ալբանց («Հանդէս ամսօրեար», 1925 թ., էջ 435) և Հ. Ն. Ավինյան («Հանդէս ամսօրեար», 1935 թ., էջ 514): Վերջին երեքը տալիս են նաև Ալվակիոսի համառոտ կենսագործյանը: Ալվակիոս Ամիդի եպիսկոպոսական աթոռը քարձրացավ 400 թվականի մայիսի 9-ին՝ իրու հաջորդ Մարտին:

409-ին գնաց Հազկերտ Ա.ի մտու՝ Պարսկաստանի քրիստոնյաների խնդրով. 420-ին ներկա էր Յահարայի ժողովին՝ իրու եպիսկոպոս Ամիդի: Նույն թվականին Թեոդոս կայսեր կողմից ուղարկվեց Հազկերտ Ա.ի մտու՝ բանակցելու համար խաղաղության մասին. 422-ին, երբ Մտիկինի առաջ պարսիկները հաղթվեցին հույներից, Ակավիոս ծախեց Ամիդի եկեղեցու թանկագին անոթները և 7.000 գերի գնելով, Պարսկաստան ուղարկեց: Վուամ Ե. հիացած նրան այս արարթի վրա՝ կանչեց նրան իր պալատը՝ հայտնելու համար իր շնորհակալությունը: Մեռել է 431 թվականին:

Բայց, ըստ ձեփ, անշուշտ երկրորդ կարծիքն է ուղիղ. այսինքն թե՛ Բարիլաս և թե՛ Ավակիոս նույն ներկայականից քաղաքի եպիսկոպոսներն էին, և դատելով անուներից՝ առաջինը Ասորոց եպիսկոպոսն էր և երկրորդը՝ Հովանց: Այս բանը երևուամ է նախ բաղադին եպակի ձևից և երկրորդ՝ Կորյունի մյուս խոսքերից. աեւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց... բերեր առ եպիսկոպոսն Ասորոց (Եպովիոյ), որ յորոց նախընկալ եղեւ, առաջի արկեալ նոցանագիրն աստուածատուր. վասն որոյ քաղուամ իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանարին...» (Կորյուն, էջ 10): Սրանց մեջ եպիսկոպոսների համար միշտ հովանակի թիվ տրվելուց երևուամ է, որ նաբիլաս և Ակավիոս ներկայականի եպիսկոպոսն էին, իսկ եպակի առ եպիսկոպոսն Ասորոց ասելուց էլ երևուամ է, որ սրբանցից մեկն էր միայն Ասորոց եպիսկոպոսը, որ և պիտի լինի Բարիլաս: Այս մասին իմ առանձին կարծիքը կհայտնեմ իր տեղուամ:

Մանոթանանք այս անձնավորության հետ հնապես տեսանք, Կորյուն արդ եպիսկոպոսի անունը դնուամ է Բարիլաս. Նույնը նորենացին (Դ, ծգ) շնչին տարբերությամբ կոչուամ է Բարիլս: Բանասերները նկատել են սակասն, որ ներկայական ժամանակակից եպիսկոպոսների շարքում չկա Բարիլս, բայց կա Բարիլաս կամ Բարուլաս. ուստի ամենայն հաջողությամբ սրբագրել են Բարիլս: Բ և Շ տառաձևերը այնքան ճման են իրար, որ բնապէ կամկած չկա, թե Կորյունի

սկզբնագրում եղել է Բարիլս և հետո, գըրշագրերի վրիպակով, դարձել է Բարիլս: Այս սրբագրությունը առաջին անգամ առաջարկել է Զամշան (Ա, էջ 492), որ ուղղում է Երարքու կամ Բարիլս, հետո Ավելոյան («Լիակատար վարք սրբոց», Ե, էջ 290), որ նույնպես ուղղում է Բարիլս, որ և Երարքու: Ավելի ուշ՝ Saint-Martin և արև: Ս. Վ. Պարոնյան («Երկրագունդ», 1884 թ., էջ 540) դարձնում է Բարուլաս, որ անշուշտ տպագրական սխալ է և պիտք է կարդալ Բարուլաս կամ Բարուլաս: Մինչև անգամ հորենացու ձեռագրերից մեկում Գալուստ Տեր-Մկրտչյանը կամ Բարիլս ձեռագրության մասին (տե՛ս «Արարատ», 1912 թ., էջ 508): Եվ Յնտրդւլյան իր Կորյունի հրատարակության մեջ արդեն մուցրել է Բարիլս ձեռը: Այս անունը զուտ ասորական բառ է և իրու հասարակ անուն բածուած է և հայտնի հայության մասին («summus pastorum հովապետ» (տե՛ս Brockelm, «Lex. Syr.», էջ 345)): Սրա հետևողությամբ կազմված է մեր մեջ Հայրապետ անձնանունը, որ գործածված է 13-րդ դարից սկսած:

Բարուլասը հեթանոս էր, քոմի որդի, մայրը քրիստոնյա. Ծնվել է Կեն-Նեշրինուամ. մեծ հարստության և քարձը դիմքի տեր էր: Խմաստամիրական ուսմունքների մեջ զարգանալով, ընդունեց քրիստոնեակությունը, գնաց Երևանաղեմ, այցելեց տնօրինական վայրերը, մկրտվեց Հորդանան գետում, դարձավ հայրենիք, վաճառեց իր բոլոր ստացվածները և դրամը բաժանեց աղքատներին: Այնուհետև արծակեց գերիներին, թողեց կին, ընտանիք, պաշտոն, և Մեսրոպի նման քաշվեց անապատ՝ ճգնելու իր գիտության և սրբության համբավը տարածվեց երկրուած. և երբ ներկայականի Դիտուններ եպիսկոպոսությունը, նրան հաջորդ ընտրեցին Բարուլաս մինչև 412 թվականին: Երբ գումարվեց Եփեսուի ժողովը (431 թ.), ներկա էր նաև Բարուլաս, որ մեծ հակառակորդ դուրս եկավ Նեստորականության դեմ, հաշածելով նրանց և այրելով նույնիսկ նրանց գրքերը: Ունեցել է ընդպարձակ գրական գործունեություն, բայց իր գովածքներից փոշ բան է հասել մեր ձեռքի: Մեռել է 435 թվականին և իրեն հաշորդել է իրաւու:

Peeters («Revue des études arméno-orientales», № 9, էջ 209) ասում է, թե այն ժամանակ, երբ Մեսրոպ եկավ Ներկայա, եղեսիակ հայության հայությամբ Պարիլաս: Պարսկական դպրոցի գըլիստավորն էր իրաւու: Անկարելի էր իրաւու: Անկարելի էր, որ Մես-

1. Պարուլասի կենսագրությունը տե՛ս Համառոտակի Գալուստ Տեր-Մկրտչյան, «Արարատ», 1912 թ., էջ 509. և, ընդարձակ, Հ. Զ. Թորոսյան, «Բազմավէպ», 1922 թ., էջ 99—104 և Յնտրդւլյան, էջ 83—84:

րոտ, Քաբուլասի և այլոց հետ ծանոթանաւոց հետո, ծանոթացած վիճեր նաև այս իրասի հետ: Իսկ եթե Կորյունի մեջ ո՛չ մի հիշատակություն չկա այս մասին, դա ո՛չ մի արժեք չնանի. և հետո, եթե որևէ բան գրպած էլ լիներ, ապագային չնշված պիտի լիներ, որովհետև Իրաս հետո նեստորական գրգառավետության առաջնորդներից մեկը դարձավ:

Այնունու Կորյուն իր պատմության թերթ այսպես է առաջ տրանսլի: «Իսկ աշակերտակրն վարդապետին՝ զտարեալսն ընդ իր լերկուս բաժանեալ, զտմանս յատորի զպրութիւնն կարգէր, և զոմանս յունական զպրութիւնն: Անո՞ի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա իրովք հաւասարօք զտովորականն առաջի երեալ զաղօթս և զտրնութիւնն և զպազատանս արտասոսալից, զիստամբերութիւնն, զհուգս զաշխարհահեծս; յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցիս»: Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտաներոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհտէն Աստուծոյ, հայրական շափոն ծնեալ ծնունդու նորոգ և սրանչելի սուլոր աջունի իւրով, նշանազիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիլորացիւք և կապօք: Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք փորովք իշանէր ի քաղաքն Սամուսացոց» (Կորյուն, էջ 9—10):

Հատվածին իմաստը շփոթ է և մասնավոր քննության պետք կա պարզելու համար այն: Առաջին առղերը ցուց են տալիս, թե Մեսուու իր հետ տարած աշակերտներին երկու խորի բաժանելով, մեկը որոշեց դնել ասուսկան գպրոց՝ ասորերեն լեզուն և զրականությունը սովորելու համար, իսկ մյուսը հունական գպրոցը՝ հունական լեզուն և գրականությունը ուսումնասիրելու համար: Սրանցից առաջինը, այն է ասորական գպրոցը, անտարակուսելի է, որ գտնվում էր եղեսիայում, ասորոց եպիսկոպոսի հովանավորության տակ: Կասկածելի է սակայն երկրորդը, այն է հոնական գպրոցը: Արդյոք այս գպրոցն է՛լ էր գտնվուած եղեսիայում (ի՞արկէ հունաց Ակակիոս եպիսկոպոսի հովանավորության տակ), թե՝ մոտական Սամուսատ քաղաքում: Այս քաղաքը հին Կոմմագենի մայրաքաղաքն էր, եղեսիայի հյուսիս-արևմտան կողմը, այժմյան Մարաշից ու շատ հեռու, եփրատի աջ ափի վրա, լայնության 37° 30' և երկայնության 38° 30' աստիճանների տակ, որի տեղուն այժմ Սամսատ գյուղն է:

Հունական դպրոցը Սամուսատում դնելու կամկածը ծաղում է Կորյունի «անտի ի Սամուսատական քաղաքն գումարէրէու բացատրությունից, Գումարէր ձեւը հասարակ բայ է և կարող է առնվել թե՝ ներգործական մտրով՝ «պատրաստեց ուղարկելու» (գումարէն) և թե՝ շեզորք մտքով՝ «պատրաստվեց երթալու» (գումարիմ): Առաջին դեպքում սեփի խնդիրը աշակերտներն են, որոնց պատրաստում է Մեսուու՝ Սամուսատ ուղարկելու, որպեսզի սովորեն հունական գպրոցում: Սրանից երեսում է, թե եղեսիայում հունական գպրոց չփառ: Երկրորդ գեպքում Մեսուու ինքնին է, որ պատրաստվում է գնալու Սամուսատ՝ իր հնարելիք գրերի առթիվ: Սրանից էլ հետևում է, թե եղեսիայում, բացի ասուսկանից, կար նաև հունական գպրոց, ուր դրավ իր աշակերտների երկրորդ խումբը: Եթե Կորյուն գումարէր բասի մոտ զնոսակամ ինքնին բառը դրած լիներ, ամեն ինչ կպարզվեր և այնպիսի կամկածների տեղիք չըր մնա: Ահա թե ինչ է նշանակում մութ գորել:

Բայց կարիք չկա կամկածելու, թե առաջինն է ուղիղ, այսինքն Մեսուու պատրաստեց իր աշակերտների երկրորդ խումբը՝ Սամուսատ ուղարկելու համար: Այսպես են ցույց տալիս հետևալ հանգամանքները.

ա) Առաջին խմբի վրա խոսած ժամանակի Կորյուն ասում է՝ «զոմանս յասորի դպրությանն կարգիր», բայց երկրորդի համար՝ «և զոմանս իլ յունական դպրութիւնն»: առաջինը ներդրյական և երկրորդը՝ նախորդիվ հայցական զնելուց այնպիս կարելի է մտածել, թե առաջին խումբը մնացել էր եղեսիայում, իսկ երկրորդը պիտի գնար Սամուսատում:

բ) Գումարէլ ուղարկելը իմաստով սովորական է հին հայերենում: ահա՝ սրա վկայությունները (տե՛ս նորալր, «Քննամէր», Ստովոլմ, 1887 թ., էջ 17 և 79):

1. «Սա խնդրեաց զշրահատ որդի Գաղաւնին, որ յետ հօրն նորա մահուան՝ հանեալ յԱնդիշելի ամրոցին, մերձ ի սահմանս Աստրապատական աշխարհին» (Եղիշե, Գ):

2. «Զգումն առաջին տային ցներշապուհ Ռիմուսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Աստրապատական աշխարհին» (Եղիշե, Գ):

3. «Եւ զՄուշկան նիսալաւուգու հանդերձ ամենայն մնացեալ գորուն գումարէր յաշխարհն Աղուանից և կրնաց և ծլրաց» (Եղիշե, է):

4—5. «Եւ զՎարդան և զմեզ գնդաւ յԱղուանս ի կոփի գումարեաց, և ինքն յանդգայն մեզ նենցեալ՝ յայս շար մղեաց... և դարձեալ գումարեալ զնա զօրու յԱղուանս,

ի վերայ Պարսկաց գումարտակին համարձակեցուցեր երթալ» (Փարպեցի, տպ. 1904 թ., էջ 84):

դ) Եթե Մեսրոպ լիներ Սամուսամ գնալու պատրաստություն տեսնողը, տարօրինակ չէ, որ այդ պատրաստությունից հետո միայն, ինչպես նկարագրում է Կորյուն, ակսուն է աշխատել հայոց գրերի վրա և երկար աշխատելոց հետո հաջողվում է հնարին:

դ) Ոմանք «անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր» խոսքը Մեսրոպի համար առնելով, կարծում են, թի Մեսրոպ եղեսիայից ճանապարհ ընկավ և իր աշխատություններն ու տառերի գյուտը ճանապարհորդության ժամանակ կատարեց: Սա բացարձակ սխալ է, որովհետև, ինչպես Կորյուն որոշ կերպով պատմում է, այդ աշխատությունը վերջացնելուց հետո, նոր միայն Մեսրոպ հրաժեշտ է տալիս եամիսկոպոսներին (Բարիլասին և Ալվակիոսին) և իր օգնականների հետ միասին իշնում Սամուսատ:

Տարօրինակ է համականում Տաղավարյան (էջ 26) Կորյունի պատմությունը: Սա Մեսրոպին նախ եղեսիա և հետո Ամիդ տանելով, այս քաղաքի մեջ է զնում հունական և ասորական դպրոցները, ուր մտնում են հայուսնողների երկու խմբերը: Ամիդից հետո Մեսրոպ «Սամուսատական քաղաքն կիշնի, անշուշտ Հռովիանուսն տեսնելու համար և ապա... Սամուսատ կիշն ե գտնալու Հռովիանուր»: Ճիշտ այսպես: Արդյոք Տաղավարյան Սամուսատական և Սամուսատ տարբար քաղաքներ է կարծում և երկու էլ Հռովիանուր է ընդունում: Հապա ինչպիս մեկնել այս կրկնությունը: Իսկ Սարդոյան («Բագմալիք», 1897 թ., համերգամաժ ապրիլի, էջ 6—7) ենթադրում է, թի Մեսրոպ Սամուսատի մեջ գտնավ Դամինելյան գրիբը Հռովիանուսի հետ, այնտեղից գնաց եղեսիա, այստեղ ավելացրեց մի քանի գրեր էլ, նորից եկալ Սամուսատ՝ Հռովիանուսի մոտ, գեղագրելու և թարգմանելու համար:

ե) «Եւ նորա իւրովք հաւասարօք զուվորականն առաջի եղեալ...» խոսքի մեջ և նուրա ձևն էլ, որ երկրորդ դեպքում անհարժար պիտի գար, շատ պատշաճավոր դիրք է ստանում առաջին դեպքում: Կորյուն ուզում է ասել, թի «Մեսրոպ աշակերտներին Սամուսատ ուղարկեց, իսկ ինքը մկնեց աշխատել իր ընկերների հետ՝ հայերեն գրերը գտնելու համար»:

Եթե մեր այս պատճառաբանությունները ընդունելի համարվեն, այն ժամանակ պետք կլինի Կորյունի հրատարակության մեջ մի փոքրիկ կետադրական փոփոխություն մըստցընել և պարբերությունն մկնել «և նորա» ձևից: այս գոմանս [ի] յունական դպրությունն

անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր: Եւ նորա իւրովք հաւասարօք...»¹:

Այսիսով պատմությունը հետևյալ ձևը կստանա.

Մեսրոպ եղեսիայում իր աշակերտներին երկու խմբի բաժանեց, առաջինը դրեց ասորական դպրոցը, իսկ երկրորդը՝ որովհետև եղեսիայում հունական դպրոց չկար, ուղարկեց մոտակա Սամուսատ քաղաքը՝ հունարին սովորելու համար: Այնուհետև, իր աշակերտների հոգսից ազատված, իր ընկերների հետ (իւրովք հաւասարօք) բոլորովին անձնատուր եղավ խուզարկությանց ու քննությանց՝ իր ցանկալի նպատակին համար: Վերջապես երկար աշխատությանց անձանձուության մարդերելուց հետո, հաջողվեց ենարեկ հայերն գրերը, եղեսիայում:

Ինձիլյան («Հնախօսութիւն», հատոր Գ, էջ 82) կարծում է, թի Մեսրոպ եղեսիայի մեջ իր աշակերտների համար հատուկ հայկական մի դպրոց է բաց արել՝ Դամինելյան նշանագրերի ուսաման համար, որ և համարում է «առաջին հայկական դպրոցը»: Բայց այսպիսի մի կարծիք, ինչպես ցույց է տալիս Ս. Վ. Պարոնյան («Երկրագունդ», 1884 թ., էջ 494), բոլորովին անտեղի է: Մեսրոպի գործը ուրիշ բան չէր, իմբ ոչ իր աշակերտներին մտցնել տեղական գրադրագույն» դպրոցները, փոքր ժամանակ, կատարելագործելու համար այն տառմը, որ սուացել էին Հայաստանում:

Եղեսիայում, Մեսրոպ Հայերին դրերը (Հնչունները) որոշելուց և նրանց յուրաքանչյուրին առանձին ձև տալուց հետո, նրանց անոնները դրեց և որոշ դասավորությամբ շարերով՝ կազմեց մեր այժմյան հայերին այրութենք. ուս անդ վաղվաղակի նշանակիալ անուանիալ և կարգեալ, յօրինէր սիդորացիւք և կապօք» (Կորյուն, էջ 10), կամ, միաբանի կազմած բնագրով՝ «նշանագրեալ և անուանագրեալ և կարգեալ, յօրինէր սիդորացիւք և կալոք և ձայնատու նշանօք» («Արարատ», 1912 թ., էջ 510):

Բայց պիտք կար այս արդին պատրաստ այրութենը գեղեցիկ և կանոնավոր կերպով նկարել՝ կազմել նորակերտ գրերի տախտակը, որ հին լիզով պեսակիտ է կոչվում և մինչև վերչերս էլ ուսմկական բարբառով պեսակ էր կոչվում: Մեսրոպ թեև բարտուղար, բայց ինչպես երկար գրության կամացիւք այսպիսական կիրառությունը, որ գնում եմ ես էլ այստեղ՝ նորալիք փոխ առնելու:

1. Այս սրբագրությունը ես մտածել էի 1903 թվականին Շոշում: Այժմ նկատում եմ, որ ինձանից 16 տարի առաջ նույնը առաջարկել է նորայր, «Քըննակեր», պրակ Ա., Ստոկոլմ, 1887 թ., էջ 15: Նորայր պատճառաբանություններ չեն տալիս, բայց քննում է զումարեն բայրի ներգործական կիրառությունը, որ գնում եմ ես էլ այստեղ՝ նորալիք փոխ առնելու:

կամ ավելի ճիշտ՝ գեղագրական արվեստը՝ Նկարիչ շնորհ շնորհ եղանականում անշուշտ կիրական ծաղկողներ և գեղագիրներ, բայց նրանք ավելի ասորական մանվածապատ ոլորապառը գրեթեն էլեն վարժված։ Ուստի Մեսոպատամ լավագույն համարեց գնալ Սամուսատ, ուզ, ինչպես տեսանք, կար նշանավոր հունական դպրոց, դիմել հունական մի դեղագրի և մի վայելու պահակիտ նկարել տալ։ Ուստի Հրաժեշտ տարով հափսիկոպոսներին (Բարիլասին և Ակալիսին), իր օֆնականների հետ միասին, Եղեսիայից ճանապարհ ընկավ Սամուսատ։

§ 3

Խշպաս Եղեսիայում, ճամանապես Սամուսատում լավ ընդունելություն գտավ Մեսորոպ։ Սամուսատի հույն հափսիկոպոսը և ժողովուրդը միջամեծ պատրիարք ցույց տվին։ «Յուրում միջամատի իսկ յիշպիսկոպոսն և յիշպիցոյն միջարեալ լինէր» (Կորյուն, էջ 10)։ Սամուսատի հափսիկոպոսի անունը չի հշում Կորյուն, բայց ըստ Peeters-ի («Review des études arméniennes», № 9, էջ 209) կոչվում էր Անդրեաս, որ Եղեսիայում նեստորական կուսակցության գլխավորներից մեկն էր։ Սամուսատում Մեսորոպ գտավ հունարենի մի գեղագիր Հոռովանոս անունով, որին հանձնարարեց նկարել իր ցանկացած պահակիտը։ Հոռովանոս վերցրեց Մեսորոպի պարզ սեագրությունը և նույն օրինակի վրայից պատրաստեց իր պնակիտը՝ տառերի կարճը կարճ, երկարը երկար պահերով, և նորրը ու հաստ գծերը գեղեցիկ նկարելով։ «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիշ ունի հիշենական դպրութեան Հոռովանոս անուն գտիալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն, միանգամայն յօրինեալ և յանկոցեալ» (Կորյուն, էջ 10), կամ, ըստ Միարանի կազմած ընագրի՝ «զնրագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն» («Արարատ», 1912 թ., էջ 510)։

Կորյունի այս բառերը (Երբագոյն, կարճ և ալլն) տեղիք են տվել զանազան սխալ բացարությունների, զանազան հեղինակների կողմից։ Օրինակ՝ Ստեփան Նազարյան («Հիւսիսագայլ», 1860 թ., էջ 241) հասկանում է ձայնավորների կարճն ու երկարը և բաղաձայնի պարզն ու կրկնավորը։ Նույնպես Մարկվարտ (էջ 31) կարճ և երկայն բառերով հասկանում է ձայնավորների ամանակը (կարճ ու երկար ա, է և ալլն), առանձին և կրկնաւոր բառերով էլ հասկանում է լ—դ, ր—ո, ւ—լ տառերը, որոնցից վերջինը չորսը այսօր մենք էլ չենք կարողանում զանազանել։ Հայերենի 36 ձայներից առնվազն 15 հատը չեր-

բառ է առանձին, իսկ դ, ո, վ՝ կրկնավոր (երկու ձայնից բաղկացած, իբր թի լլ—դ, թթ—՛՛, նի—՛՛), իսկ երբագոյնի մասին չելուսում։

Սարբայան էլ («Բագմաֆէպ», 1897 թ., ապրիլ, հավելված, էջ 7) հասկանում է միշին դարերի քերականական բացարությունները, որոնց համաձայն Երբագոյն հն կ, պ, ա, ծ, ն, կարճ մա ա, ի, ո, և երկայն են է, ով ձայնավորները և եւ, ըւ, իւ, կրկնաւոր են ը, զ, լ, իւ, շ, չ, զ, ո, ց, առանձինն էլ՝ մնացյալը։

Այս բալորը սխալ մեկնարանություններ են։

Ամենից առաջ պետք է հարց տալ, թի ի՞նչ մարդ էր Հոռովանու և ինչո՞ւ համար Մեսորոպ դիմեց նրան։

Մինչև այժմ պատմվածներից մեկ հայտնի է, որ Հոռովանու գեղագիր էր («զրի ունի հելենական դպրութեան», — ասում է Կորյուն և լուսպիրուս) և Մեսորոպ դիմեց նրան իր կազմած տառերը գեղեցիկ կամ ճաշակավոր ձևով նկարել տալու համար։ Եթե այդպես է, ուրեմն վերի բառերն էլ տառերի գեղագրական ձևերը նշանակող բառեր պիտի լինեն և ոչ թի ուրիշ բան։ Եթե Հոռովանու քերականական կամ լիզվարան լիներ, այն ժամանակ միայն կարելի էր սպասել նրանից քերականական ուղղումներ։ Ինչպիս լիզվարանությունը հաստատել է, 5-րդ դարում և ավելի առաջ Հայերենը կարճ ու երկար ձայնավորներ չուներ, հատևարար կարելի չէ Կորյունի կարճ ու երկայնը ձայնավորների ամանակի համար հասկանալ, ինչպես անում են նազարյան և Մարկվարտ։ Բայց նույնիսկ իթե 5-րդ դարում հայերենը կարճ ու երկար ձայնավորներ ունեցած լիներ, Մեսորոպի կազմած արբութենում չկա այդպիսի բան, ուստի Կորյունի ասածը և Հոռովանուսի արածը տարրեր բան պետք է լինի։

Նույնպես Կորյունի առանձինն ու կրկնաւորը չեն կարող ձայնարանական արժեք ունենալ։ Մի մարդ, որ իր լեզվի մեջ չունի այսինչ հնչումը, չի կարող լսել ու գանազանել, երբ մի օտար հնչի։ Թյուրքն ու պարսիկը չեն կարողանում զանազանել և գ, զ և ծ ձայները։ Մենք էլ չենք կարողանում զանազանել վրացերենի դ և դ ձայները։ Այսօր էլ եվրոպացիք չեն զգում մեր և ու ձայների տարբերությունը և ո՛չ միայն եվրոպացիք, ալլեւ նույն իսկ վրաստանի հայերը։ Այս դատողությամբ հույն Հոռովանուն էլ չպիտի կարողանար զանազանել հին հայերենի ր—ո, լ—դ, ւ—վ ձայները, որոնցից վերջինը չորսը այսօր մենք էլ չենք կարողանում զանազանել։ Հայերենի 36 ձայներից առնվազն 15 հատը չեր-

կարող զանազանել խեղճ Հռուփանոսը (թ, ժ, ի, ծ, հ, ձ, լ, ն, յ, շ, չ, վ, ր, ց), էլ ինչո՞ւ պիտի դիմեր Մեսրոպ նրան՝ այս տառերի ձայնաբանական գանազանությունը որոշելու համար: Նշանակում է, թե այս բառերն էլ ուրիշ բան են նշանակում, բան ինչու որ ենթադրում է Մարկվարտ:

Մնաց Երագոյն-ը:

Կորյունի հին հրատարակությանց մեջ մի բառ պակաս էր այստեղ, որ այժմ Կորյունի քննական հրատարակությունը գտավ ու ավելացրեց. այդ է—զերագոյնն և զլայնագոյնն: Մի՛ միակ այս բառը կարող է դնել մեզ ուղղի ճանապարհի վրա և ցուց տալ Կորյունի տված վեց բառերի խմաստը:

Այդ վեց բառերը տառերի գեղագրական ձևին էին վերաբերում. Երբագոյն-ը և լայնագոյն-ը նշանակում են տառերի հաստ ու բարակ գծերը. օրինակ Ետառի գծագրության մեջ ձախաֆորմյան երկար սյունը և աջակողմյան կարճ սյունը ենաստ են, իսկ թեր բարակ է: Այս է հայերեն տառերի ընդհանուր գեղարվեստական ոճը. Հորիզոնական գծերը բարակ են, իսկ ուղղահայց գծերը հաստ: Այս է Կորյունի Երբագոյն և լայնագոյն կոչածը: Այս բացատրությունից հետո, ինքնին համարակալի է դառնուած Կորյունի կարեն-ն ու Երկար-ը, որով պիտի իմանանք տառերի երկար ու կարճ սյուները; Սրա լավագույն օրինակը տալիս է Պ տառը, որի աջակողմյան սյունը երկար է, իրու ձախակողմյանները մինչ մյուսից կարճ: Մնալ է առանձին-ն ու կրկնաւոր-ը, որ նմանապես գեղագրական ոճի համար ամսած պիտի լինի: Աբեղյան, որ իր հորվածում («Առվետական գրականություն», 1941 թ., № 2, էջ 45—46) ցուց է տալիս Մարկվարտի սխալները և շատ ճիշտ բացատրում է համաստք շորս բառերի իմաստը, այստեղ Կորյունի առանձին բառով հասկանում է հայերենի շոկ, մենակ մի տառով հասկանալու հայերենու իսկ կրկնալու բառով հասկանալու է երկու տառով կազմված ու հնչյունը, որի հորինումը վերագրում է Հռուփանոսին:

Ես չեմ բնորունում գեղագիր Հռուփանոսի մասնակցությունը ու ձախավորի հորինման մեջ: Եվ ահա ի՞ն պատճառաբանությունը:

Մեսրոպ Եղեսիայում կագմել էր արդեն իր այբովենը. այստեղ որոշել էր նաև ու, ինչպես նաև իւ գրելու ձեզ: Նա գիտեր, որ հույները գրում են երկտառ ու, իսկ աստղիները և պարսիկները գրում են վ և կարդում ու: Ինքը Մեսրոպ հետևեց այս երկտառից որուէ մեկին. կամ հետևեց հոմարենին և հնարեց հայերեց, ու ձեզ, և կամ հետևեց պարսիկներին ու տառիներին և վ ձայնին

տվեց նաև ու հնչումը: Առաջին դեպքում Հռուփանոսի մասնակցությունը վերանում է: Բայց երկրորդ դեպքում էլ չի կարող տեղի ունեցած լինել, որովհետև փորձից գիտենք, թե Մեսրոպ ընդունած էր մի առափն մի հնչյուն տալու սկզբունքը: Ուստի չէր կարող պատճեն, որ նա վ տառին նաև ու հնչյունը տված լիներ: Մնալ է ուրեմն ենթադրել, թե նա ու ձայնավորի համար Եղեսիայում հնարել էր առանձին մի տառ (մի նշանից բաղկացած, ինչպես արեց հետո աղվաներեն այբովենի համար): Արդ, կարելի՞ է երեակայել, որ Մեսրոպ նախապես ու ձայնավորի համար առանձին մի տառ հնարած լիներ (ինչ որ մի մեծ առավելություն պիտի լիներ մեր այբովենի համար), և հետո Հռուփանոսի դրդամբ չնշան և հունարենի համաձայն հորինած լիներ ու երկտառը: Այդ անկարելի է. ուստի երկու դեպքում էլ վերանում է Հռուփանոսի մասնակցությունը ու ձայնավորի հորինման մեջ և նրա հորինումը մնում է Մեսրոպին:

Կա նաև այն կետը, որ դժվար թի Կորյունը մի միակ ու-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) և մնացյալ բոլոր տառերը անվաներ առանձին: Եթե ու-ի նման գուգատառ, բայց միաձայն կապակցությունների թիվը մի թիվ ավելի լիներ հայերենում (ինչպես գերմաներենում Շի, sch, stch, ph, pf, ih, ie և այլն) կարելի էր այդ երկու բաժանմունքների գոյությունը դնուունել:

Պետք է ասել նաև, որ եթե մյուս շորս բառերը տառերի գծագրական ձևերն են մատնանշում, ինչո՞ւ այս երկուսն էլ՝ առանձին-ն ու կրկնաւոր-ը, նույնը չպիտի լինեն և ձայնաբանական երկարությունը պիտի հնշանակեն: Ես կարծում եմ, որ կրկնաւոր բառի սովորական ու տարածված իմաստը կասեցրել է մեր միտքը և առաջնորդել է մեզ սխալ մտածողության: Բայց եթե աշքի առաջ բերենք կրկնել բառի հնագույն հայերեն հնշանակությունը, որ է «ծալի», սորել» (տե՛ս «Ենոր Հայկագեան Բառփիրք, հատոր Ա, էջ 1136, սյունակ թ), որից և ծուեր կրկնելու ստունկը ծալիկը, այն ժամանակ ի՞նարկեկ կմտածենքը, որ նաև այստեղ կրկնաւոր նշանակում է ծալած, ուրուած): Կրկնաւոր (կամ կրկնայար) բառով Կորյունը համարնում է կոր փաթուլթներ և ննեցող տառերը, ինչպես Ժ, Թ, Ծ, Չ և այլն, իսկ առանձին բառով ուզում է հասկանալ Ո, Ս, Լ, Ր և այլն ձեի տառերը, որոնք ուզիդ, շիտակ, անշատ ու մենակ կանքնած են:

Հռուփանոսի մասնակցությունը հայերեն տառերի հորինման մեջ՝ առանաբակ պիտք

է դուրս գցել ծրագրից։ Այն քննիչները՝ ուրո՞մք Հռուսանոսին մասնակից են դարձնում Մեսրոպյան տառերի հորինման գործին, ինչպես օրինակ Ստեփան Նազարյանը («Հետիսափակ», 1860 թ., էջ 241), լավուշադրությամբ չեն կարդում Կորյունի խոսքը։ «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիշ ուն հելլենական դպրութեան Հռուսանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնիրացոյնն և զլայնազոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ» (Կորյուն, էջ 10)։ Վերջին երկու դերքայները, որոնք Կորյունյան ոճով իրեւ բայց են դորժածված, իրեւ ենթակա ունեն ոչ թե Հռուսանոսին, այլ Մեսրոպին, որ հիշված է շատ ավելի առաջ, որիշ բազմաթիվ դերքայներով։ Եթե յօրինեալ և յանկուցեալ դերքայների ենթական Հռուսանոսը լիներ, գտեալ բարին հաջորդող որով հարաբերականը սեռական հոլով պիտի լիներ (որոյ)։ Բայց այսպես չէ, այլ գործիական հոլով է (որով)։ Ուրեմն և Հռուսանոսը մի գործիք է, մի միջոց, որով Մեսրոպ «յօրինել» և «յանկուցել» է իր տառերը, այսինքն ա՛յն տառերը, որ արդեն եղեսիայում, նախան Սամուսատ գալը և Հռուսանոսին գտնելը, «Ճնել էր» և «ճնշանակել անվանել և կարգել ու հորինել սիրուաներով և կապերով»։

Սրանից ավելի պարզ և մեկին բացատրություն կամ վկայություն, որ իսպառ ջնջում է ամեն մի կատած ու տարակուս, չի կարող լինել։

Կանգնած է Մեսրոպ՝ իր սկագրությունը ձեռքին, Հռուսանոս՝ զրին ու վրձին առած, մեկ նայում է մասպրին, մեկ նայում պահակիտի վրա և պատրաստում հայերենի առաջին այրութենական տախտակը։ Ավելորդ է ասել, որ այս նկարման միջոցին Մեսրոպ տախու է միշտ իր ցուցմունքները Հռուսանոսին։

Տառերի ձեւավորումից հետո, Մեսրոպ անմիջապես թարգմանության մկնեց, իր երկու հասուն աշակերտուների ընկերակցությամբ, որոնցից առաջինի անունն էր Հովհան՝ հեկեղյաց գալապոյց, իսկ երկրորդին՝ Հովսեփ, Պաղանական ցեղից։ Ով թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտոքն իւրովք...» (Կորյուն, էջ 10)։

Թարգմանության համար Մեսրոպ ընտրել է նախ Սողոմոն իմաստունի Առակաց գիրքը և իր պաշտելի բերանով տուն տալով գեղագիր Հռուսանոսին՝ թելադրել է հայերեն առաջին խոսքը։

Ա. Ռ. Ա. Կ. Ք Ս Ո Վ Ո Մ Ո Ն Ի

ՈՐԴԻՌՈՅ ԴԱԼԹԻ
ԹԱԳՈՒՐՈՐԻ ԻՄՐԱՑԵԼԻ

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՃԱՆԱՋԵԼ ԶԱՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՐԱՏ,
ԽՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՁԱՐՈՅՑ։

Այս ընտրությունը պատահական չէր. նրա՛ համար Առակաց գրքից մկնեց Մեսրոպ, որովհետև այս գիրքը հենց սկզբից խրատում էր ճանաչել իմաստությունը և կրթությունը, հասկանալ հանձարի խոսքերը. և զիրով, որ մկրտքը էր կրթության և գիտության, կառա՞ղ էր սրանից ավելի գեղեցիկ զուգաղիպովուն ունենալու մեջ իսկոյն ի թարգմանութիւմ ձեռն արկեալ, խորհրդարար ակսանելով յԱռակաց» (Խորենացի, Գ, ծգ).— «Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և վիսրատ, իմանալ զրանս հանձարոյց» (Կորյուն, էջ 10)։

Հռուսանոս ո՛չ միայն իր գեղեցիկ գրչով գրեց հայերեն առաջին գիրքը՝ Սողոմոնի Առակաց գրքի թարգմանությունը, այլև իր մոտ աշակերտ առնելով Մեսրոպի բերած աշակերտներից մի քանիսին, մկնեց ստորեցնել նրանց հայերեն գեղագրության արվեստը, որպեսզի նրանք էլ Հայաստան գանձարով տարածեն իրենց հայրենակիցների մէջ. «Որ և զրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով մանկունս զրիշ նմին զպրութեան» (Կորյուն, էջ 10).— «Միանգաման և զարուեստ զրչութեան ուսուցանել տարով իւրոց մանկագրոյն աշակերտացն» (Խորենացի, Գ, ծգ):

Ինձիձան («Հնախօսութիւն», Հատոր Գ, էջ 83) հետեւնում է այս խոսքերից, թե Մեսրոպ Սամուսատի մեջ բաց է արել առաջին հայմական դպրոցը՝ Մեսրոպյան գրերով, որը աշակերտել են իր աշակերտները, որոնց Հայաստանից Միջագետք էր բերել, ինչպես և Սամուսատի հայ բնակիչների որդիները։ Սա նշանակում է ժամանակակից մի հեղինակի թեթև մի խոսքը ավելորդարար ընդարձակել ու լայնացնել։

(Ծարունակելի)